ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ՀՄԱ) ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11.10.2021թ.
ժամը 14[00]

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 08-ը հոկտեմբերի 2021թ. ժամը 11[00]-ին ՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքները:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչունցը,

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը,

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի սպա բ/ծ փոխգնդապետ Մ. Գալստյանը,

Գնումները համակարգող

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«Արֆարմացիա» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի՝

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Հայտով ներկայացված Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.3) 4-րդ բաժնի (Իրական շահառուների տվյալները), 4.2 ենթաբաժնի (Անձը հաստատող փաստաթուղթը) սյունակի 4.2.5. տողում չի նշված անձի ՀԾՀ կամ

համարժեք համարը, ինչպես նաև 4.8 ենթաբաժնի (Իրական շահառուի կոնտակտային տվյալները) սյունակի 4.8.1.տողում չի նշված իրական շահառուի էլ. փոստի հասցեն:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 11.10.2021թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն
օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.5 13.10.2021թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	թրիմեպերիդին (թրիմեպերիդինի հիդրոքլորիդ) trimeperidine (trimeperidine hydrochloride)	հատ	1949	2,143,900	1	«Արֆարմացիա» ՓԲԸ	1,461,750	292,350	1,754,100

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար «*Դեղորայքի*» ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցը հանդիսանում է որպես միակ մասնակից, որի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը գների նվազեցման նպատակով 18.10.2021թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում) որոշեց ընտրված մասնակցին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի՝ («Արֆարմացիա» ՓԲԸ-ի) հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցեց նշված բանակցության վարման օրվա, ժամի և վայրի մասին:

18.10.2021թ. ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ծանուցված մասնակիցը չներկայացավ և վերջինիս գնային առաջարկով ներկայացված գինը մնաց անփոփոխ:

18.10.2021թ.-ին կայացած նիստերին բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ, ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը, սակայն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով վերջինիս կողմից իրականացվել է էլեկտրոնային հայտի գնահատում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 **18.10.2021թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակից՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Թազայան)

6.1 «ՀՀ ՊՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Կ. Խաչունց
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Գալստյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան